

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարվան 6 ռուբլ.:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Օտարադարձարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առաւօրեայ օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում է առանձին լիցիտով:

Յայտարարութիւնները համար գնորդում են
իրարանկար ըստ 2 կոպեկի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պաշտօնական հեռագիր. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ալեքսանդրապոլից: Նամակ Մեծ-Ղարաբլայից: Ներքին լուրեր: — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիս: Գերմանիա: Անգլիա: Ֆրանսիա: Նամակ Թիֆլիսից: Արտաքին լուրեր: — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ

Ներքին գործերի միմիայն
Հեռագրում է Կովկասեան Փո-
խարքայի պաշտօնակատարին
մարտի 1-ին 1881 թւին:
Նյուոր, մարտի 1-ին, ժամը
1-ին և 45 րոպէին, ԹԱԳԱՒՈՐ
ԿԱՅՍՐԻ գինախաղից վերադա-
նալու ժամանակ, կատարվեցաւ
սպանութեան փորձ ՆՈՐԻՆ
ՄԵԾՈՒԹԵԱՆ սրբազան կեան-
քի դէմ, երկու ճայթող ուռւ-
բերի միջոցով: Նրանցից առա-
ջինը փասեց Նորին Մեծութեան
կառքին, իսկ երկրորդը ճայթ-
վելով ծանր վէրքեր պատճառեց
ԹԱԳԱՒՈՐԻՆ: Վերադառնալով
Զմեռնային պալատը, Նորին Մե-
ծութիւնը բարեհաճեց ընդունել
սր. հաղորդութեան խորհուրդը
և այնուհետև ի Տէր հանդաւ-
շարագործներէն մէկը բռն-
ված է:

**Ի Տէր հանգուցեալ Թադա-
ւոր Կայսր ԱԼԷՔՍԱՆԴՐ ՆԻ-
ԿՈՒԱՅԵՎԻՉԻ հոգեհանգիստը**
երէկ մարտի 2-ին, ժամը 1-ին
կէսօրից յետոյ կատարվեցաւ
Թիֆլիսի Սիճեան մայր եկեղե-
ցում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

17-փետրվարի

Ալեքսանդրապոլու հասարակութիւնը, ինչպէս, առհասարակ, ամենայն մի հասարակութիւն ունի իր անվերջ հոգսերն ու ցաւերը: Միջնա-կարգ ուսումնարան ունենալու հոգս, քաղաքա-յին մատենադարանի հոգս, մի գաւառական շարքաթիւթի ունենալու հոգս և ուրիշ շատ երկրորդական հոգսեր:

Միջնակարգ ուսումնարան ունենալու ճգ-տումը նոր չէ. Նա արդէն վաղուց դարձել է մի կարեւոր պահանջ մեր քաղաքի համար: «Րէա-կական ուսումնարան, ընդլայն գլխից» այս էր խնդրում, այս էր աղաղակում շարունակ մի քանի տարի մեր հասարակութիւնը, բայց դա-նազան խոչնդոտներ արգելաւորներ էին հան-դիսանում այս գեղեցիկ հիմնարկութեան իրա-գործմանը: Հասարակութեան մեծ մասը անհա-

կացողութիւնը, մի քանի անարգ «պանդուխտ-ներ», ստորերկրեայ ինտրիգաները, քաղաքա-յին գործոց ղեկավարների բնաւորութիւնից զուրկ լինելը և ուրիշ մի քանի պատճառներ էլ, որոնց մի առ մի թվելը շատ հեռու կը տանէր մեզ, կարող են մի բաւականին որոշ գաղափար տալ ընթերցողին յիշեալ խոչնդոտ-ների մասին: Այս յայտնի արգելաւորներից մի ամենանշանաւորն էլ կազմում էր, վերջին միջոց: Ներքին, հեռեկան դժուարութիւնը: Քաղաքից պահանջվում էր անպայման, որ նա պարտա-ւորվի իւրաքանչիւր տարի հատուցանել բացա-նելի ընդլայն գլխից 7,000 ռուբլի իբրև նպատակ և վարձ ուսումնարանի տան համար: Իսկ մնացեալ ծախսը բարեհաճում էր հոգալ ինքը կառավարութիւնը: Քաղաքացաւ հարց. — ինչպէս անել: Քաղաքը կարծի էր տալ մի այդ-պիսի նշանաւոր դուռը, թէ չը տալ: Հրաւիր-վեցան քաղաքի ընտրվածները, կազմվեցաւ ժո-ղով: Երկու փնտրանութիւնից, կամ, աւելի լաւ է ասել, երկու արժուից յետոյ, մի հա-սարակական վճռով վճռվեցաւ ապա 7,000 ռու-բլին և ուսումնարանի տան վարձը: Եւ այսպէս, ի վերջոյ, բարձրացան մէջ տեղից բոլոր արգել-ները: Ուրեմն կարելի է հաստատապէս ասել, որ էլ խոչնդոտներ չեն պատահի և որ ներկայ-թիւ սեպտեմբեր ամսում անշուշտ կը բացվի մեր քաղաքում ընդլայն գլխից, և մեր քա-ղաքի մեղաւոր հասարակութիւնը վերջապէս կարժանանայ տեսնելու մի միջնակարգ և բարե-կարգ ուսումնարան: Երեսուցիք ամսին և հնգից արդէն սկսված է քաղաքային դպրոցի վերջին դասաւանդումը: Ֆրանսերէն լեզուի դա-ստութիւնը աշակերտներին ընդլայն ու-սումնարանում ընդունվելու նախապատրաստու-թեան համար, որ ֆրանսերէն լեզուն կը լինի մի պարտադիր ուսանելի լեզու: Եւ սա այնքան ճշմարիտ է, որքան 2X2=4: Եւ այսպէս միջ-նակարգ ուսումնարան ունենալու հարցը արդէն մի վճռված հարց է: Նա ինչպէս սովորաբար ստում են, արդէն իր ստն ու գլուխը հաւաքել է և հեռանում է անորոշութեան բնակից: Հիմայ այս բնով վրա մնում են երկու ծանրակշիւ հոգ-սեր. մատենադարանի և շարքաթիւթի հրատա-րակելու հոգսեր:

Մտաւորական զարգացումը յառաջանում է այստեղ արագաբայ և այս մտաւոր զարգաց-ման հետ էլ զուգընթացաբար, զարգանում է ընթերցանութեան ճաշակը: Նա հետզհետէ զարգանում է, շատերն համար, մի կարեւոր պա-հանջ: Բայց որ գտնել բաւականութիւն այս մտաւորական պահանջին: Մեր քաղաքում դեռ-ես չը կայ մատենադարան: Սա կարելի է մի փոքր զարմանալ թվի ընթերցողներին: Բայց ինչ արած որ այսպէս է, յառաջդիմութեան նշան է: Ճշմարիտ է մենք ունենք մի կուռ, մի երեւելի կուռ, բայց սա էլ բոլորովին չեղզված է իր ուղղութիւնից: Սա չէ ծառայում իր նպա-տակին: Սա բոլորովին կորցրել է իր կրթող նշանակութիւնը: Երազիրներ ստացվում են այն-տեղ, այն, թէ հայերէն և թէ ռուսերէն, (ու-րախ եմ, որ չեմ կարող հերքել այս իրողու-թիւնը), բայց հետաքրքրվող, բայց ընթերցող... Հատ քիչ անդամներին, մի քանի բացառու-թիւներին: Պարոն, այս տարի անդամ գրված է ք. Կուրբին: — Չէ, գրվում, ինչ անեմ. ես չեմ պիտի թողնալ: Ահա թէ ինչ գաղափար են ստացել մեզանում շատերը կուրբի նշանա-կութեան վերաբերութեամբ: Ինչո՞՞հ... Կարծում են կուրբ թղթախաղի ստապրէզ է և շատ իրաւունք ունեն այսպէս կարծելու: Այնտեղ, ուր հասարակութիւնը պէտք է հետաքրքրվի լրագրների ընթերցանութեամբ, պէտք է ակա-նաւան լինի գրականական երկերներ, տե-նում է միայն միշտ մի և նոյն թղթախաղը, մի և նոյն կրթարարութիւնը, տեսնում է պարա-հանդէսներ, երբեմն միայն ներկայացումներ: Միթէ, մեղաւոր են հիմա թիւր կարծիք ունե-

ցողները, որ կրթող հիմնարկութիւնը փոխարկ-ված է մի կտորաբալ անբարոյականացնող հիմ-նարկութեան:

Բայց ես չեղզում եմ բուն խնդրից: Թողնեմ կուրբ իր հակակրթող յառաջդիմական ընթաց-քի մէջ և վերադառնամ դէպի մատենադարանի հարցը:

Այս կարեւոր հարցը համարեա մի տարի է, որ դրադեցնում է շատերի մտքերը, և դարձել է նրանց համար մի մոտաանջութեան առարկայ: Հաւաքվել, խորհել, խօսել այս մասին շատ ան-գամ կատարված է: Խօսք և խոստումներ շատ, բայց կատարում բնաւ. դժուար է ասել դրակա-նապէս, թէ ինչ վախճան կունենայ մատենա-դարանի հարցը, բայց այս միայն հաստատ է և անհերքելի, որ աշխատում են իրագործել և այս հանրագուս հիմնարկութիւնը: Ցանկանում եմ բո-լոր սրտով աջակցելու այն պարտին, որ յանձ-նառու է եղել իր աշխատութեամբ դուրս բերելու այդ բանը: Մի քիչ էլ խոստումներ քննութիւն և կատարման շատութիւն եմ ցանկանում:

Մի շարքաթիւթ լրագիր հրատարակելու մե-տադրութիւնն էլ դրադեցնում է այստեղ մի քա-նի ճանրակշիւ: Նշանակութիւն ունեցող անձնե-րի, և այսպիսի մի թիւք ունենալը արդէն կենսական պահանջ է դարձել Ալեքսանդրապո-լի համար: Հասարակութեան կարիքը, հասա-րակական պահանջները օրըստօրէ բաղձնում են, որոնցից և քանակաւոր դասն անհաճ չենք տեսնում արժանիքով, քննադատված և պարզ-ված Թիֆլիսի ակզային պարբերական հրատա-րակութեանց մէջ: Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Ո՛չ մի մարքաբաղաքի կամ կենտրոնա-կան քաղաքի լրագիր չէր կարող նուրբել իր էջերը մի որ և ինչ գաւառի լրագրութիւն յօդուած-ները տալարութեամբ: Այսպիսի լրագիրները հարկաւ դրամված պէտք է լինէին, պիտու-րապէս, ընդհանրական հարցերով և չէին կարող հետեւել միակողմանի ուղղութեան: Մանաւանդ «Մշակ», վերջին միջոցներում, մինչև բուկը թաղված նիւթի մէջ, հետզհետէ դժուարանում է զետեղել իր էջերում գաւառական թղթակ-ցութիւնները: Գաւառական թերթը միայն, մեր կարծիքով, կարող էր բարեկեցութեամբ ծառայել գաւառական պէտքերին: Եւ այս պէտքերը մեղանում անթիւ են: Մի շարքաթա-կան թերթի հրատարակութիւն, այն, կենսական պահանջի չափ ստիպողական է Ալեքսանդրապո-լի համար, — բայց կիրառործվի արդե՞ք այդ պահանջը... դա ցոյց կը տալ մեզ մօտաւոր ապագան:

Հաշիւով թէ՛ տարեկան որքան ծախս է պա-հանջվում մի այսպիսի թերթ հրատարակելու համար, ճանաչելով այն անձնաւորութիւնը, որ կամենում է դառնալ ինքնիշխան այդ թերթի հրատարակութեան գործին, աչքի առաջ ունե-նալով մեր հասարակութեան ներկայ մտաւոր զարգացման ստիճանը, պէտք է ենթադրել որ Ալեքսանդրապոլում աւելի յաջողակ և նպաս-տաւոր պայմաններ կան մի գաւառական թերթ հրատարակելու համար, քան թէ ուրիշ գաւա-ռական քաղաքներում: Տեսնենք...
Տեղացի

ՆԱՄԱԿ ՄԵՇ-ՂԱՐԱՔԻՒՍԻՑ

Փետրվարի 18-ին

Ղարաքիլիսի օրիորդական դպրոցի բացման օրից իսկիւ առաջ եկաւ. այն ցաւալի հանգա-մանը, որ տեղական որս և չքաւոր օրիորդները, նիւթական միջոց չունենալով, զիջված պէտք է մնան կարեւոր գատարակութիւնից, բարոյական կրթութիւնից և մանաւանդ ձեռագործութիւնից, որ գիւղական աղքատների համար առաջին տեղն է բռնում: Իմ ծանօթ կանանց հասարակութեան մէջ շատ անգամ արժարձեցի այս միտքը, թէ պէտք է Ղարաքիլիսի որս և չքաւոր օրիորդնե-

րին օգնել ուսման գործում: Շնորհակալ եմ, ում դիմեցի, յարգեցին իմ առաջարկութիւնը:

Անցեալ 1880 թւի յունվարի 1-ին կազմեցինք մի «որբանան» ընկերութիւն, որոշեցինք ամ-սական անդամական 20 կոպէկ: Ներկայ 81 թւի յունվարի 1-ին լրացած լինելով մեր ընկե-րութեան առաջին տարին, ես, որպէս գանձա-պահ, պարտականութիւն եմ համարում, հրա-պարակաւ մի համառօտ հաշիւ ներկայացնել մե-ծապատիւ ընթերցողներին: Ընկերութեան ան-դամահանգ թիւը լրիւ 30 է, բոլորն էլ իրանց տարեկան տուրքը (2 ռ. 40 կ.) լրացրել են: Ես յոյս ունեմ որ այս 81 թւում ես մեր սիրե-լի ընկերութիւնը կը շարունակեն իրանց բարե-գործական տուրքը: Համոզված եմ որ Ղարա-քիլիսի միւս կանայքն էլ կամոց կամաց կը մօ-տենան մեզ և գործին աւելի ոյժ և յառաջդի-մութիւն կը տան:

Մուտք. 1880 թւի յունվարի մէկից մինչև ներկայ 1881 թւի յունվարի 1-ը անդամական տուրքերից գումար է 66 ռ. 40 կ.: Վաճառած քարեգրիչներից, մատիտներից և քանոններից մնացել է արդիւնք 2 ռ. 20 կ.: Նուեւ է ստացվել Ալեքսանդրապոլից մի պարտին 40 կ.: Ուրեմն բոլոր տարեկան մուտքը կանէ 69 ռուբլի: Եւ ինչ որ մնում է որդեգրուի օրիորդ Տէր-Ղազարեանցի դասական պիտոյքների, հազնե-լիքների և այլ հարկաւորութեանց վրա 8 ռ. 60 կոպէկ:

Ծախքը դուրս գալով մուտքից կը մնայ 60 ռ.—40 կ.: Այս մնացած գումարից 30 ռուբլին արուած է տոկոսով, իսկ 30 ռ. 40 կ. մնում է գանձարանում ընկերութեան: Վերջացնելով իմ համառօտ հաշիւը, ցանկանում եմ երկու խօսք էլ աւելացնել: Ընկերութիւնը ի նկատի ունենալով իր նոր կազմված և ակար օյժը, հարկաւոր հա-մարեց առաջին տարին պահել միայն մի որդե-գրուի: Բայց այսուհետև եթէ միայն մեր լա-րեսիրտ ընկերութիւնը չը հեռանալին այս մեր խմբից, ամենայն տարի կարող են պահել առ-սակաւ հինգ որդեգրուի: Առաջին տարին շատ տաք սրտով մօտեցան գործին մեր քոյրիկները, այս տարի տեսնենք:

Փետրվարի 18-ին Տէր-Մեղիսեղեկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒԲԱ» լրագիրը լսել է որ ժողովրդական լուսաւորութեան միմիայն Վարդապետի հրաժա-րականից յետոյ այդ պաշտօնի ամենահաւանա-կան կանգիւղատը լինելու է բարձր Նիկոլայ: Այդ պաշտօնեան մի ժամանակ ուսումնարանա-կան չըլանի հոգաբարձուի պաշտօն էր վարում: Եւ ինչպէս կ'արեւելական ուսման պաշտպան է և հակառակորդ է Ռուսաստանի փոքր ազգութիւնների մայրենի լեզուի դպրոցնե-րի մէջ մտցնելուն: «ՄՈՒԲԱ» լրագիրը լուրը հա-ւատալի չէ, որովհետև զարգացական գործին կեն-դանարար դարկ տալուց յետոյ, հազիւ թէ կա-ռավարութիւնը կուզենայ կրկին վերադառնալ կոմ Տօլստոյի սխտեմային, որ իր կորստաբեր հետեւանքներն ունեցաւ Ռուսաստանի ամբողջ ուսման կազմակերպութեան վրա: Իսկ բարձր Նիկոլայ յայտնի է որպէս հետեւող Տօլստոյի ուղղութեան, և դուցէ կը գերադասեցի էլ այդ վերջինին հին ուղղութեան մէջ: Կովկասեցիները շատ լաւ են յիշում ինչպէս էր ներգործում բա-րձր Նիկոլայ մեր դպրոցների վրա, ինչ կատա-րեալ կորստաբերութեան և անշարժութեան էր հասցրել նա մեր դպրոցները: Եւ ոչ թէ միայն Եանօվսկոյ. իսկացի կառավարութեան ժամանա-կին, այլ մինչև անգամ Նեվէրսկի ժամանակին մեր դպրոցները կրկին չուէն առան: Նեվէրսկի էլ բարձր Նիկոլայից յետոյ մեզ առաջադէմ և ազատամիտ մարդ երեսց:

Մեծ-ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ Եւրոպայի մի թաղից, շատերը ամեն բանի համար այդ ջրից գործ են ածում։ Բայց տարաբաղադար մի քանի անհասկացողներ թէ տաւարի աղբը և թէ այլ աղտոնութիւններ առանց մտածելու ամեն օր թափում են այդ ջրի մէջ և ապականում են ջուրը։ Այդ ջրի արեւմտ շատ տեղեր թափված են աղբի կոյտեր, որից ջուրը մաղցնելով միշտ ղեղնագոյն է լինում։ Լուծւում ենք որ նոր տա- նուակներ մտադիր է արգելել ջրի մէջ աղբ թա- փելը և ամբողջ գտնված տաւարի աղբի կոյ- տերը հեռացնել է տալիս։

Մեզ գրում են Մեծ-Ղարաքիլիայից որ այդ տեղի հասարակական շտեմարանը արդէն պատ- րաստ է և բաւական արմատեղէն հաւաքված է այդ շտեմարանի մէջ։

Մեզ գրում են ԱԼԷՔԱՆԴՐԱՊՈԼԻՑ։ «Մի քանի անհասկացողութիւններ, որոնց թուում և մի քանի անգամ, աշխատում են ամեն միջոցներով փնտել «Մշակի»։ Նրանք համոզում են նրանց, որոնք իրանք ոչինչ համոզմունք չունեն, չըս- տանալ «Մշակ» լրագիրը։ Նրանք վրդովված են «Մշակի» դէմ, որովհետեւ այդ լրագիրը միշտ հարուածել է նրանց և նրանց նմանները հասա- րակական գործունէութիւնը։»

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը մարտ ամսի համար նշանակել է հետեւեալ տ ա կ ս ա մեր վաճառանոցի առաջին պիտոյքի մթերքների վրա 3 օրների արկւղից թիւած հաղը առաջին տեսակի 5 կօպէկ ֆունտը, երկրորդ տե- սակի 4 կօպ., նոյն արկւղից թոնրի մէջ թիւած հաղը առաջին տեսակի 6 կօպ., ֆունտը, երկ- րորդ տեսակի 4 1/2 կօպ., լաւաներ առաջին տե- սակի ֆունտը 7 կօպ., երկրորդ 5 1/2 կօպ., եր- րորդ 5 կօպ.։ Տաւարի մսի ֆունտը առաջին տեսակի 11 կօպ., երկրորդ 9 կօպ., սոււի 17 կօպ. ֆունտը, ոչխարի մսի ֆունտը 13 կօպ., խոզին 13 և 12 կօպէկ։ Այդ տակսան չէ վերա- բերվում զիւղական արդիւնաբերողներին, որոնք ծախում են իրանց արդիւնքները թիֆլիսի հրա- պարախնդրում և վաճառանոցներում։

ԹԵԼԼԱԻՑ մեզ գրում են, որ Կախեթում ե- ղանակը դարձանային է այժմ, ոչ մի տեղ ձիւն չէ կայ, բացի սարերից։ Ցանքերը խոտածում են առատ բերք։ Կենսական պիտոյքները էժա- նանում են։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

«Բէյտերի» ընկերութեանը հեռագրում են Կ. Պոլսից փետրվարի 25-ից։ Պետու- թիւնները դեպքաններից մի քանիսը կար- ծում են, որ պէտք էր Յունաստանից սկզ- բից համաձայնութիւն ստանալ, թէ նա կընդունի այն վճիռները, որ կը կայաց- նեն դեսպանները Կ. Պոլսի մէջ այժմեան բանակցութիւնների ժամանակ։ Միւս դե- սպանները ընդհանուակը կարծում են, որ պէտք է զիջանելի երկրներին ազգաբնա- կութեան մեծամասնութիւնը յայտնէ արդեօք նա կամենում է, որ իր հայրենիքը միանայ Յունաստանի հետ, թէ մնայ թիւր- քաց իշխանութեան տակ։ Արտաքին գոր- ծերի միևնույն Միւս փաշա իր խօսակցու- թեան ժամանակ դեսպաններին հետ յոյս է յայտնել, որ պետութիւնները չեն պա- հանջի Թիւրքիայից սկզբից ցոյց տալ այն զիջումների չափը, որ նա անելու է յօգուտ Յունաստանի։ Այնու ամենայնիւ, ասել է միևնույնը, Բ. Դուռը մտադիր է մի քանի զոհաբերութիւններ անել խաղաղութիւնը պահպանելու համար։

Լոնդոնի «Standard» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են հետեւեալը։ Բ. Դուռը հը- րաժարվում է կատարել պետութիւնների պահանջը, որ նա սկզբից որոշի զիջումնե-

րի չափը յօգուտ Յունաստանի։ Դեսպան- ները այդ տեղեկութիւնը պաշտօնապէս ստացան։ Եւ ճշմարիտ, մի անկախ պե- տութիւն, որ խաղաղութիւնը պահպանե- լու համար և կամաւորապէս իր երկրի մի մասը տալիս է ուրիշ պետութեան, չէ կարող կատարել այդպիսի պահանջ։ Քանի որ յայտնվեցաւ, թէ Բերլինի կոնֆերեն- ցիայի վճիռները պարտաւորեցուցին չեն, այլ խորհուրդների բնաւորութիւն ունեն, ոչ ոք իրաւունք չունի որոշել թիւրքաց զոհաբերութիւնների չափը։ Մի և նոյն ժամանակ այդպիսի քայլը արդէն կը դնէր բանակցութիւնների աջողութեանը։ Այդ մտքով էլ կը կազմվի Բ. Դուռն պատասխանը, եթէ նա հարկաւոր կը համարի գրաւոր պատասխան տալ և բերանացի յայտնու- թիւններով չի բաւականանայ։

Եանիայից «Polit. Corresp.» լրագրին գրում են, որ Թէսալիայի մէջ գտնված թիւրքաց զօրքերի զրուծիւնը նոյնքան վատ է, որքան և Եպիրսոսում։ Այդ երկու նահանգների մէջ թիւրք զինուորները պ- մենաանհրաժեշտ իրերի պակասութիւն են զգում։ Վատ կերակրից զինուորները տա- նեակներով են մեռնում։ Բացի յամառ ալ- բանցի զինուորներից, որոնք անդադար փախչում են, մնացած զօրքերը նոյն դե- ղեցիկ յատկութիւններն ունեն, որով հիա- նում են եւրօպացիները։ Թիւրքաց զօրքերը խիստ զիսցիպլինա են պահպանում, ար- համարհում են վտանգը և ամեն բանին անտարբերութեամբ են վերաբերվում։ Ա- մենք համոզված են, որ թիւրքաց զօր- քերը քաջութեամբ կը կռւեն, եթէ կը բացվի յոյն-թիւրքական պատերազմ։

Եանիայից «Standard» լրագրին հաղոր- դում են, որ տեղական իշխանութիւնը կատարութեան հրաման է ստացել ծա- խել պետական բոյր կալուածքները և ան- յապաղ դէնքի հրաւիրել բաշլուզուկնե- րին, որպէս զի թիւրքաց անկանոն զօր- քերի թիւը գոնեա 6000 հասնի։ Մի քա- նի նահանգների մէջ թիւրքաց պահափ զօրքերը հրաժարվեցան հաւաքվել կառ- վարութեան կարգադրութեան համեմատ։

ԳԵՐՄԱՆԻԱ

Նորիւրում գերմանական պարլամենտի մէջ կարգադրում էր ներքին գործերի մի- նիստը կոմ Էյլենբուրգի օրինագիծը՝ Գեր- մանիայի ինքնավարութիւն ունեցող հիմ- նարկութիւնների վրա հսկելու մասին։ Ըն- թերցանութեան ժամանակ իշխան Բիսմար- կի հաւատարմատարը պարլամենտի մէջ կարգաց Բիսմարկի մի գրութիւն, որ չա- փազանց յարձակվում էր օրինագծի վրա։ Այդ հանգամանքը մեծ ազմուկ բարձրա- ցրեց պարլամենտի մէջ և առիթ տուեց ներքին գործերի մինիստրին հրաժարական տալ։ Այդ եղելութեան մասին լրագիրների մէջ կարգում ենք հետեւեալ տեղեկութիւն- ները։ Բիսմարկ իր կարծիքները ներքին գործերի մինիստրի օրինագծի մասին պէտք է յայտնէր մինիստրների խորհուրդին և ոչ թէ պարլամենտին։ Քանի որ պետական կանցլերը իր կարծիքները հրապարակապէս յայտնեց, այդ կը նշանակի, որ նա կամե- նում է ապաստվել այնպիսի մի մինիստրից, որ անկախ է գործում և ուշադրութիւն չէ դարձնում Բիսմարկի կամայականութեան վրա։

Պրուսական մինիստրների անկախութիւնը միշտ ատելի է եղել իշխանի համար և նա այդ բանը շատ անգամ բացարձակ յայտնել է։ Կանցլերին միշտ աջողվել է մինիստրնե-

րի ազատութիւնը ճշել և նրանց իր օգ- նականներ դարձնել։ Միայն ծովային և պա- տերազմական մինիստրները ազատ են մնա- ցել նրա ճշմարտից։ Միւս մինիստրներից միայն կոմ Էյլենբուրգ չէր հպտակվել իշխանին, նրան իր գլխաւորը չը համա- րելով, այլ միայն նախադաժ և առաջին մինիստր։ Իր վարմունքով պետական կան- ցլերը կամենում էր հեռացնել ներքին գոր- ծերի մինիստրին։ Եւ նա հասաւ իր նպատակին։

Թէպէտ կոմ Էյլենբուրգ հրաժարական տուեց, բայց կայսրը երկար ժամանակ չէր կամենում ընդունել նրա հրաժարա- կանը։ Թէ կայսրը և թէ թագաժա- ունգը աշխատում էին, որ Էյլենբուրգ յետ առնի իր հրաժարականը։ Այդ նպատակի համար Բիսմարկ ստիպուած էր յայտնել պարլամենտին, որ իր գրութիւնը ուղարկել էր ոչ թէ պարլամենտի մէջ կարգաւոր հա- մար, այլ որ իր հաւատարմատարը այդ գրութիւնը ի նկատի առնէր իբրեւ հրա- հանգ և որ վերջինը սխալմամբ կար- դացել էր գրութիւնը պարլամենտի մէջ։ Այդ մեկնութիւնը ոչ զիջ չը բաւականա- ցրեց կայսրից սկսված միջև պատգամաւոր- ները և ներքին գործերի մինիստրը ար- դէն վերջնականապէս տուած է իր հրա- ժարականը։

Ներկայումս ամբողջ Բերլինը զբաղված է թագաժառանգի որդու հարսանիքով, որի համար մեծ պատրաստութիւններ են տես- վում։

ԱՆՊԼԻԱ

Լրագիրների մէջ կարգում ենք հետե-ւեալը։ Շատ դժուար է գնահատել այն փո- փոխութեան նշանակութիւնը, որ պատա- հեց բրիտանական սահմանադրութեան հետ վերջին երկու ամիսների ընթացքում։ Ամեն- քին յայտնի է, որ անգլիական համայնքնե- րի ժողովը երկրի իսկական կառավարու- թիւնն է։ Այդ ժողովը միշտ վայելել է ազգաբնակչութեան հաւատարմութիւնը և յարգանքը և նրա անդամները միացած են եղել չը նայելով քաղաքական համոզմունք- ների դանդաղութեանը։ Ամենահօգ և մի- նիստը այդ ժողովի հաւատարմատարն է եղել, միշտ ուսումնասիրել է նրա ցանկու- թիւնները և աշխատել է կատարել նրա կամքը։ Բոյր մինիստրութիւնները աշխա- տել են յարգել համայնքների ժողովի փոք- րամասնութեանը և պահպանել ժողովի սահմանադրական բնաւորութիւնը։ Գլադ- ստոնի մինիստրութիւնը բացառութիւն կազ- մեց, մեծ իշխանութիւն տալով ժողովի պի- կերին և նրան մի զօրաւոր դէնք դարձնելով կառավարութեան համար։

Գլադստոն կարծում էր, որ իրլանդական ժողովուրդը նրան իր փրկիչ կը համարի, եթէ նա մի աննշան փոփոխութիւն կանէր 1870 թ. կալուածական օրէնքներին մէջ։ Գլադստոն իրլանդական ժողովուրդը սկսեց նրան թշնամի համարել և ընդդիմա- դրել։ Այդ հանգամանքից զրգոված և ի նկատի առնելով Ֆորստերի սպառնալիքը՝ հրաժարվել մինիստրի պաշտօնից, եթէ չը ղադարեցնվի «Habeas Corpus» օրէնքի յոժը, Գլադստոն յայտնեց համայնքների ժողովին, որ նրան ոչ մի գործ չի առա- ջարկվի մինչև չը քննվին ստիպողական օրէնքները իրլանդիայի համար։ Գլա մի սպառնալիք էր ժողովի և նրա փոքրամաս- նութիւնը կազմող իրլանդացի պատգամա-ւորների համար։ Այդ էր պատճառը, որ համայնքների ժողովը վերջին եօթ շաբաթ-

ների ընթացքում ծաղրաժութեան առար- կայ դարձաւ եւրօպայի առաջ և նրա ան- դամները կորցրին իրանց արժանաւորու- թիւնը և մի քանի իրաւունքները, թէպէտ և ժամանակաւորապէս։

ՖՐԱՆՍԻԱ

Աթէնքի մէջ եղած անգլիական դեսպա- նի երկու հեռագիրները Ֆրանսիական օ- ֆիցերներ Յունաստան ուղարկելու և Ֆը- րանսիական զէնքը յունական կառավարու- թեանը ծախելու մասին մեծ ազմուկ բար- ձրացրեց Ֆրանսիական պատգամաւորների ժողովի և սենատի մէջ։ Այդ երկու ժողով- ների մէջ էլ կառավարութեանը հարցեր առաջարկվեցան։ Սենատի մէջ ընդդիմադ- րական կուսակցութեան անդամները՝ դուքս Բրոյի, Օդիլիէ Պակիէ և Բիւֆէ ստա- տիկ յարձակվում էին կառավարութեան վրա, պահանջելով նրանից խոստովանվել, թէ Գամբետտա մեղաւոր էր, որ Յունաս- տանի հետ բանակցութիւններ սկսվեցան Ֆրանսիական օֆիցերներ ուղարկելու և զէնք ծախելու մասին։ Երկու ժողովների մէջ էլ կառավարութիւնը միատեսակ բա- ցատրութիւններ տուեց։ Մինիստրների նա- խագահ Ֆերրի ասաց, որ Ֆրանսիական օֆիցերների ուղարկելը Յունաստան ոչինչ նշանակութիւն չունէր, բացի այն, որ նը- րանք նպատակին յունական զօրքերի կազ- մակերպութեան բարեկաւութեանը։ Նշա- կութիւն չունի նոյնպէս և հրացանների ծախելը։ Քանի որ պատերազմը յայտնված չէ, պինպահանգների դիրկտօրներին չէ կարելի մեղադրել կողմնապահութեան մէջ, որովհետեւ նրանք օրէնքի համեմատ են գործել։ Երբ կառավարութիւնը տեղեկա- ցաւ, թէ մի քանի տեղ զէնք է ծախված, նա իսկոյն միջամտեց և Յունաստանը Ֆը- րանսիայից ոչ մի փամփուշտ չը ստացաւ։

Գործը դրանով էլ վերջացաւ և բողարկ- ված մնաց։ Մի բան միայն ակնիւն է տպված է լրագիրների մէջ, որ Ֆրանսիա- կան կառավարութիւնը ինքը իր կողմից, կամ դրդմամբ կամենում էր օգնել Յունաս- տանին, բայց նա կանգնեց կիսաճանապարհ- հի վրա և զրա պատճառները յայտնի չեն ոչ հասարակութեանը և ոչ Ֆրանսիական ազգային ժողովներին։

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՑ

Կ. Պոլսի, 21 փետր. 81

Խոհեմութիւն և վատութիւն երկու բաւեր են զոր պէտք չէ չփոխել։ Երկու օր առաջ Կ. Պոլ- սոյ հայ երիտասարդներն այս մասին իրենց կարծիքը յայտնեցին և հասկցուցին թէ կառա- վարական բռնաբարութեանց դէմ փոքր ինչ ցոյց մը անուել չէ։ Վարդանի տարեկարծը տո- նել թիւրք տերութիւնը խափել կարգվէ և այս արդեւքը բաւական եղաւ այդ հանգեւր սովորա- կանէն աւելի չքեղ կերպով կատարելու համար։ Կ. Պոլսոյ զինուոր պուրաճանները պատրաս- տութիւններ կը տեսնեն, եթէ զարցիլ դուս- րը կարող են փակել, անգոր են եկեղեցւոյ ա- ռաջ։—Խորէն սրբաբան, Պէշիկթաշ, կէս օրը մի ժամ անցած տակուին հանդէս կը կատարէր, մեծ բազմութիւն եկեղեցին լցուած է. օրիորդ և երիտասարդք ոգևորակ ճառախօսութիւններ կարտասանեն։ Իսկիւտար տաք դուրս վարդա- պետ մը քաջարտութիւնը մինչև յիմարութեան սահմանները կը հասցնէ, և ժողովուրդին ազլա- րարութիւն կընդունի որ քիչ մը մեղմ խօսի. երկու հազարէն աւելի անձինք եկեղեցին և շը- ջապատը կը լեցունին. վարդաբանները կը փակեն, դաշակ կը բերեն, և իբր թէ սրահի մը մէջ ը- լային, կերպին, կը ճառեն ու կը ծափահարեն։ Ղալաթիա, մեր պանդոկաւո եղբարց արցունք- ներուն վկայ եկեղեցւոյն մէջ, Կիլիկիոյ կաթո- ղիկոսն է որ կը յուզէ ժողովուրդը։ Այս մարդը

Յ Լ Յ Տ Լ Բ Լ Բ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ

ОБЪ ИЗДАНИИ

съ апрѣля 1881 года въ г. Тифлисѣ еженедѣльнаго юридическаго
журнала

ЮРИДИЧЕСКОЕ ОБЗРѢНІЕ

Журналъ будетъ выходить по ЧЕТВЕРГАМЪ, въ размѣрѣ до 2-хъ печатныхъ листовъ, по слѣдующей программѣ:

- Отдѣлъ I.** Статьи по теоріи и практикѣ права и судопроизводства.
- Отдѣлъ II.** а. Извлечение изъ приказовъ о важнѣйшихъ назначеніяхъ по вѣдомству Юстиціи въ Имперіи.
б. Перечень и краткое изложеніе важнѣйшихъ распоряженій и узаконеній правительства.
- Отдѣлъ III.** а. Краткіе отчеты о засѣданіяхъ въ судахъ Кавказскаго Намѣстничества. Въ случаяхъ особенно важныхъ—стенографическіе отчеты будутъ издаваться въ видѣ особыхъ приложений къ журналу.
б. Тезисы изъ руководящихъ рѣшеній Тифлисской Судебной Палаты по дѣламъ, разрѣшеннымъ ею въ кассационномъ порядкѣ. Въ случаѣ надобности здѣсь-же будетъ помѣщаемъ и текстъ самыхъ рѣшеній.
в. Особенно интересныя рѣшенія гражданскихъ судовъ Кавказскаго Намѣстничества. Преимущественно тѣ рѣшенія, коими разрѣшаются какія либо вопросы права и судопроизводства, вызванные мѣстными особенностями Кавказскаго края.
г. Корреспонденціи юридическаго содержанія.
- Отдѣлъ IV.** Перечень новыхъ книгъ юридическаго содержанія. Редакція по возможности будетъ представлять и краткіе отчеты объ этихъ книгахъ.
- Отдѣлъ V.** Смысь. Мелкіе случаи изъ судебной жизни и практики.
- Отдѣлъ VI.** Судебный указатель. Резолюціи Тифлисской Судебной Палаты по дѣламъ апелляціоннымъ и кассационнымъ.
- Отдѣлъ VII.** Тезисы изъ вновь выходящихъ рѣшеній Кассационныхъ Департаментовъ Сената.
- Отдѣлъ VIII.** Объясненія.

Журналу обещали свое сотрудничество, сверх многих лиц судебного ведомства: *Ф. К. Бакало, Ф. А. Бяков, В. М. Горбовский-Заранек, Н. А. Динельштейн, В. П. Канатов, П. В. Макашук, Я. И. Рашет, В. А. Селистренников, П. П. Соколов, Е. Д. Стрельбицкий, А. С. Френкель* и др.

Редакция журнала—по Ново-Бebutовой ул., д. № 6.—Администрация (для приема подписки, объявлений и розничной продажи)—близъ Головинскаго проспекта, по Безымянному пер., д. Тамашева.—Подписная цѣна на журналъ, съ доставкой и пересылкою, на годъ—10 р., на 9 мѣс.—8 р. 20 к., на 6 мѣс.—6 р., на 3 мѣс.—3 р. 20 к., на 1 мѣс.—1 р. 20 к.—Подписаться можно съ 1-го числа каждаго мѣсяца.—Отдѣльные номера—по 25 к.—Объявленія, казенныя и частныя, по таксъ за занимаемое мѣсто.—Иногородныхъ просятъ обращаться исключительно въ Администрацію журнала.

Иадатель А. Френкель,
присяжный повѣренный.

Редакторъ А. В. Степановъ

ՀԵՄՕՐՕՒՒԿԸՆ ԲՈՒՍԵԿԸՆ ՀԵՂԸՆԻԻԹ փորձված և առաջարկված պրոֆէսոր բժշիկ ԿՐՏՏԿՕՎՍԿՈՒՅ շատ զեղեցկ միջոց է ՍՏԵՄՈՒՐՍԻԶԱՆՆԱԶԱՆ ՅԱՒԵՐԻ գեմ, մաքրում է և շատացնում է ԼՐԻՒՆԸ, վերականգնում է ՄԵՐՄՆԻ ընդհանուր հարմանան, մանաւանդ՝ առաջարկվում է Հիմնորի և Իպախսոդրիա ՀԻԿՆԵՂՈՒԹԵԸՆ գեմ: Մի շրջ, գործածելու ԽՐՏՏՆԵՐՈՎ 1 ր. 80 Կ.: Օտարաքաղաքացիք ուղարկում են ՓՕՍՏԻ ծախսը: Ծախվում է Ռուսաստանի ԲՈՒՈՐ ԴԵՂԱՏՏՆԵՐԻ մէջ և զեղերի պահեստների մէջ: Պահեստը Մօսկվայումն է, Ն. Մատենսէյսի մօտ, Տվերսկայա փողոց: Արշէնսկի մէջ Կայուշանսկու և Բրայունշտէյսի մօտ: Վարչավայի մէջ Ա. Ֆ. Գալլէի մօտ:

22 – 25 (5)

Մինչև այժմ չեղած ԵԿԵՆՁԻ ԻԻՂ, ԲԺԻՇԿ
ՇՄԻԴՏԻ, որ կատարելագործված է բժիշկ ՄԵՎՐԻ-
ԿԻԻ ԴԵՅՉԻՑ: Առողջացնում է ամեն տեսակ խոն-
ԼՈՒԹԻԻՆ, եթէ նա բնական չէ: ԵՐԵՐ ՐՈՒՐԼ, ըս-
տանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ Շ, Շ, այդ իղից,
մանրամասն խՐՏՏՆԵՐՈՎ, գործածուլթ առ մասին: Այդ
իղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆ-
ՆԵՐԻՑ և Ալեքսանդր ՎԵՆՑԵԼԻՑ, Կազանսկայա
փողոց № 3:

34—52

ՎԱՋԱՌՄԱՆ ԳՆԵՐՈՎ ձևեղ-
վայ պայտօներ 12 ռ., ֆուֆայկաներ 2 ռ.
50 կ., զվարկներ 1 ռ., մատուցարաններ
5 կոպեկ, ամաններ հատը 12 կ., հնդ-
կական բրինձ 10 կ. ֆունտը: Անզվիսյան
կոնֆեկտներ 40 կ., իսկ թեյ, որի ֆունտը
ամեն տեղ 2 ռ. 50 կ. արժե, 1 ռ. 80 կ.
է ծախվում ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱ-
ՆՈՒԹԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԳԱԼԵՐԷՈՒՄ:

ՎԱՐՁՈՎ Է ՏՐՎՈՒՄ ԲՕԼ-
ՇՕՅ ԿՐԻՎՈՅ ՓՈՂՈՑԻ վրա գր-
անվող խեղճորեն աշցի սեփական ՏԱՆ
ՎԵՐԻՆ ՅԱՐԿԻ: Պայմանների մա-
սին ԴԻՄԵԼ Պ. ԽԵՐՕԴԻՆԵԱՆ-
ՑԻՆ, ՄԻԽայիլովսկայա փողոցի վրա №
56: 2—4

ՎԱՐՁՈՎ Է ՏՐՎՈՒՄ ՍԵ-
ՐԵԲՐԵԱՆՆԻ ՈՍԿԵՐԻԶԻԱՆԱ)
ՓՈՂՈՑԻ քա ղապող ԽԵՐՕԴԻ-
ՆԵԱՆՆԻ ՏՈՒՆԸ № 22. Պայման-
ներ ձաքն ԳԻՄԵՆ ԽԵՐՕՐԻՆԱՆՑԻՆ,
ՄԻԽԱՅԼՈՎ ՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ
ՎՐԱ № 56: 2—4

2ր նախելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ զներով կը ծախվին. ԿՈՆԳՈ-ԹԷՅ 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կօպ., շատ լաւ ՄՕՆԻՆԳ 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., Հիանալի ԿԱՅՍԱՍԻ 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և ԱՄԵՆԱԼԱԻ ԹԷՅ 2 ր. առանց թղթի: Անգլիական ըէփօրիներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն ԲԱՐՆԱԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ, Գնեստի ԿՈՂՊԵՔԵՆԵՐԸ, Տուրնօրի ԳՐԻԶՆԵՐԸ և էկստրակտ կաթած-շօթօրակի ծախելու համար, որոնք Վարիզի հանդիւր Ժամանակ ոսկէ մեղալ ստացան: ՀՈՏԱԼԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.: Սաճառականներէն օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կօնֆէկաներ հազի դէմ 60 կ. ֆունտ:

32—100

Կենտրոնական գրադարձառանցումը ի միջի այլոց վաճառվում են հետևեալ գրքերը:

1. Սրուեստ երկրաչափութեան, որ է առողջ, երկայն ու երժանիկ ապրելու ուսումը: Շար. բժ. Փոփովիչ. գ. 1—50 Կ.
2. Մօրիս կամ աշխատութիւն, ի պէտս նախնական դպրոցաց: Հեղ. տ. Գառն. գ. 1 Կ.
3. Հռչակաւոր ոճիւրք: Պրէնկլիէ Մարքիզուհին: Պատկեր. վէպ. Աղ. Դիւմա գ. 1 Կ.
4. Դիւաբնակ բլուր: Վէպ. Էժէն Սիւ 2 հ. գ. 2 Կ.
5. Խորհրդաւոր կղզի: Հեղ. Ժիւլ Վէրն 3 հ. բովանդակութիւն ա. հ. Օգոստոս նաւաբերկեր. բ. հ. Ընկեցիկ մարդը. գ. Կլզույն Գաղտնիք գ. 3 Կ.
6. Աշխարհի շրջան ութսուն օրուան մէջ: Հեղ. Ժիւլ Վէրն գ. 1—50 Կ.
7. Բարեցի Դ. Մերիկա: Հեղ. Է. Լաբուէ 2 հ. գ. 2 Կ.
8. Պարոյր կամ ասեռումն Նիտուէի. գրեթե ճեր. Գ. Պատկանան գ. 50 Կ.
9. Թուղթ Մարկոսի Աղաբէգեան Հայոց Աշխարհի Ազգի և եկեղեցու, ազգայնութեան մասին առ պատուականաց պատուական տէր Ներսէս Պատրիարքն հայոց գ. 2 Կ. 25 Կ.
10. Հ. Ղ. Ալիշանեան: Տեղագիր հայոց Մեծաց գ. 2 Կ. 50 Կ.
11. Նուէր Կաղանդի: Պատկերազարդ մանկանց ընթերց. Նշան Պերպերեանի գ. 65 Կ.
12. Քնարիկ մանկան. Աղեք. Արարատեանցի գ. 40 Կ.
13. Տարեկը իմաստասիրութեան, ընդարձակ Հ. Ա. Վ. Գուրգենեան 5 հատոր գ. 3 Կ. 50 Կ.
14. Խորհրդական բերդը: Վիպասանութիւն Ֆօֆեր օր. Գաղիացւոյ գ. 1 Կ.
15. Ընտիր Հայկազունք: Պատկերազարդ կենսագրութիւնք գ. 2 Կ. 75 Կ.:

Նշին տեղը վաճառվում են հայերեն, ռուսերեն և օտար լեզուների դասագրքեր, դասական պոեզիաներ, աշխարհագրական քարտեզներ, նկատողական ուսման համար պատկերներ, վիպասանութիւններ, թատրոնական պիէսներ, ուղեցոյցներ, բառարաններ, տեղեկացոյցներ և այլն:

Օտարաբաղադրացիք իւրեանց պահանջները փողի հետ պիտի ուղարկեն հետևեալ հասցեիւ. Тифлис, Въ Центральную Ынижную Торговлю. Ճանապ. ծախք պէտք է աւելորդէն իւրաքանչիւր ռ. 10 Կ.:

ՍԱԼԻՑԵԼԵՆ ԵՏԵՄԻ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻՋՈՑ-
ՆԵՐ ԵՏԵՄՆԵՐՈՅԺ ԲԺՇԿԵԼԻՆԻ ԷՊԻՍԿՈՍՈՍԻ
ԹՅՈՒՆ ԵՆ ՄՈՒՐԱԾ ՄՈՍԿՎԱՅԻ ԲԺՇԿԵԼԵՆ ՖԵԿԿՈՒԼՏԵՏԻՑ:
ԵՂԵ ՎԻՃՈՅՆԵՐԸ ՄԵԾ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՆ ԳՄԵԼ Ե ՎՈՐՈՇԱՐԿԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԻՅՐԻՆ ԵՄԵՆԱԼԵՒԻ ԿԱՌԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԲԵՐԱՆԻ Ե ԱՄԱՄՆԵՐԻ ՏԱՄԱՐ: ԿԱՐԵԼԻ Է ԵՏԵՄՆԵՐԸ ՎԱՏԱԿԱՆԵԼ ՓՕՇԽԱՆԱԼՈՒՑ, ՍԱՌԵՑՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԼՕՐՁՈՒՆԻՔԻ ԲԵՐԸ Ե ՎԱՍ ԶՈՏԻ ԱՌԱՋՆ ԵՆ ԱՌԵՆՈՒԹՅՈՒՆ:

Եռամսաբայթ բժիշկ Ե. Ի. Եղեկյանի ԳԼԽԵՒՈՐ ՊԵ-
ՆԵՍԸ՝ զանկում է ԽՕՄԿԼՅՈՒՄ, ԿՈՒՋՆԵՑԿԻ ԿԵ-
ՄՈՒՐՔ, ՍՕԿՕԼՕՎԻ տանը:

ԹԻՖԼՍՈՒՄ Կարելի է գտնել Ն. Մ. ՅՈՒՐԻՆՕՎԻ
ԿՈՎԿԱՍԵՆՆԵ և անդրկովկասեան գլխաւոր ՊԵՇԵՍՏՈՒՄ:
Ծախողներ ՆՇԱՆՆԵՐՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:
11- 30 (11)

ՍԵՐՄԵՐ պարտիզի բոյսերի և ԾԱ-
ՂԻԿՆԵՐԻ ԲՈՂՈՐՈՎԻ ԹԱՐՄ ստաց-
ված են ՎՈՎԼԱՍԵԱՆ ԳԻՂԱՏՆԱԵՍԱՆ ԸՆ-
ԿԵՐՈՎԺԱՆ գործակառարի խանութի միջ-
ԳՕԵՎԻՆՍԿԱՅ ԿՈՐՈՅ № 11. ԼԱՐՇԵԻ
ԽԱՆՈՒԹ: ՍԵՐՄԵՐԻ ԶՈՇԿԱՆԻՆԵՐ ձՐԻ ԵՆ
ԱՐՎՈՒԹ: 3—10

ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱԿԱՆ ամեն տե-
սակ ԳՈՐԾԻՔՆԵՐ մինչև Ապրիլի 20 վա-
ձառվում են շատ էփան գնով: Հարցնել
Կենտրոնական Գրավաձուանոցում (Արծրու-
հուն Գալէէէյում):

3—3